

© Եվրոպայի խորհուրդ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2013: Սույն թարգմանությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի (www.coe.int/humanrightstrustfund) աջակցությամբ: Այն որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին: Ավելին իմանալու համար ծանոթացեք սույն փաստաթղթի վերջում ներկայացված հեղինակային իրավունքի վերաբերյալ նշումներին:

© Council of Europe/European Court of Human Rights, 2013. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court. For further information see the full copyright indication at the end of this document.

© Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2013. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour. Pour plus de renseignements veuillez lire l'indication de copyright/droits d'auteur à la fin du présent document.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային տեղեկատու թիվ 149

2012թ. փետրվար

Trosin-ն ընդդեմ Ուկրաինայի - 39758/05

Վճիռ 23.02.2012թ. [Բաժանմունք V]

Հոդված 8

Հոդված 8-1

Ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

Հազվադեպ և սահմանափակ ընտանեկան այցելություններ ցմահ բանտարկյալի համար.
խախտում

Փաստեր. 2005թ. դիմումատուն դատապարտվել էր ցմահ ազատազրկման: Մինչև 2010 թվականը վեց ամիսը մեկ անգամ դիմումատուին այցելում էին նրա ընտանիքի անդամները: 2010 թվականից ի վեր նրան սկսեցին այցելել երեք ամիսը մեկ անգամ՝ առավելագույնը չորս ժամով: Այցելությանը կարող էին ներկա գտնվել միայն երեք չափափառ անձ, չնայած այն փաստին, որ բանտարկյալը ցանկանում էր պահպանել կապը իր մոր, կնոջ, որդու և եղբոր հետ: Բանտարկյալը այցելուների հետ կարող էր շփվել ապակե միջնապատի ետևից և բանտի աշխատակիցը ներկա էր լինում ողջ այցելության ընթացքում:

Բրավունք. Հոդված 8. Թեև ազատազրկումն անխուսափելիորեն ենթադրում էր որոշակի սահմանափակումներ կալանավորի ընտանեկան կյանքում, դիմումատուի գործով ներպետական օրենքի համապատասխան դրույթները մեխանիկորեն սահմանափակում էին բոլոր ցմահ բանտարկյալների այցելությունների հաճախականությունը և տևողությունը՝ անկախ նրանից, թե արդյո՞ք այդ սահմանափակումների կիրառումը անհրաժեշտ էր յուրաքանչյուր առանձին դեպքի համար: Այնուամենայնիվ, Դատարանը գտավ, որ,

ընտանեկան այցելությունները չպետք է սահմանափակվեն նման ոչ ճկուն կերպով և պետությունները պետք է մշակեն մեխանիզմներ, որը թույլ կտար իշխանություններին համադրել իրար հետ մրցակցող անհատի ու հանրության շահերը և հաշվի առնել յուրաքանչյուր առանձին դեպքի առանձնահատկությունները: Դիմումատուն միաժամանակ կարող էր տեսնել իր ընտանիքի միայն երեք անդամներին՝ սահմանափակ ժամանակահատվածում և ապակե միջնապատի ետևից, որը բացառում էր որևէ ֆիզիկական շփում: Բացի այդ, բանտի աշխատակցի ներկայությունը թույլ չէր տալիս դիմումատուին առանձին և մտերմիկ շփում ունենալ իր ընտանիքի անդամների հետ: Ամփոփելով՝ պետությունը չէր ձեռնարկել համապատասխան միջոցներ, որոնք երաշխավորում էին, որպեսզի դիմումատուի անձնական շահերը իր ընտանիքի հետ հանդիպումների ընթացքում պատշաճ կերպով հավասարակշռության մեջ լինեն համապատասխան հասարակական շահերի հետ՝ արտաքին աշխարհի հետ բանտարկյալների շփումը սահմանափակելու համար:

Եզրակացություն. խախտում (միաձայն):

Հոդված 41. 5,000 եվրո՝ (EUR)՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում: Նյութական վնասի փոխհատուցման համար ներկայացված պահանջը մերժվել էր:

© Council of Europe/European Court of Human Rights
This summary by the Registry does not bind the Court.

Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դատարանի քարտուղարության այս ամփոփումը պարտադիր չէ Դատարանի համար

Սեդմեք այստեղ [Նախադեպային տեղեկատվության համար](#)

© Եվրոպայի խորհուրդ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2013

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պաշտոնական լեզուներն են ֆրանսերենը և անգլերենը: Սույն թարգմանությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի (www.coe.int/humanrightstrustfund) աջակցությամբ: Այն որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին, որը պատասխանատու չէ թարգմանության որակի համար: Այն կարելի է բեռնել HUDOC-ից՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի տվյալների բազայից (<http://hudoc.echr.coe.int>), կամ տվյալների ցանկացած այլ բազայից, որին HUDOC-ը տրամադրել է փաստաթուղթը: Այն կարող է վերաթողարկվել ոչ առևտրային նպատակներով՝ պայմանով, որ գործի անվանումը ներկայացվի ամբողջական և ուղեկցվի վերը նշված հեղինակային իրավունքի նշումներով, ինչպես նաև Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդին հղումով: Առևտրային նպատակներով սույն թարգմանությունը մասնակիորեն կամ ամբողջապես օգտագործելու դեպքում, հարկ է այդ մասին տեղեկացնել հետևյալ հասցեով՝ publishing@echr.coe.int

© Council of Europe/European Court of Human Rights, 2013

The official languages of the European Court of Human Rights are English and French. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court, nor does the Court take any responsibility for the quality thereof. It may be downloaded from the HUDOC case-law database of the European Court of Human Rights (<http://hudoc.echr.coe.int>) or from any other database with which the Court has shared it. It may be reproduced for non-commercial purposes on condition that the full title of the case is cited, together with the above copyright indication and reference to the Human Rights Trust Fund. If it is intended to use any part of this translation for commercial purposes, please contact publishing@echr.coe.int.

©Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2013

Les langues officielles de la Cour européenne des droits de l'homme sont le français et l'anglais. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour, et celle-ci décline toute responsabilité quant à sa qualité. Elle peut être téléchargée à partir de HUDOC, la base de jurisprudence de la Cour européenne des droits de l'homme (<http://hudoc.echr.coe.int>), ou de toute autre base de données à laquelle HUDOC l'a communiquée. Elle peut être reproduite à des fins non commerciales, sous réserve que le titre de l'affaire soit cité en entier et s'accompagne de l'indication de copyright ci-dessus ainsi que de la référence au Fonds fiduciaire pour les droits de l'homme. Toute personne souhaitant se servir de tout ou partie de la présente traduction à des fins commerciales est invitée à le signaler à l'adresse suivante : publishing@echr.coe.int